



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկա՝ անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Սարրա Բաղյան

Ուսումնական հաստատություն՝ Չարենցավանի Մ. Մաշտոցի անվան ավագ  
դպրոց

Երևան 2023

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածություն .....	3
2. Ընտանիք: Ընտանեկան հարաբերությունների հիմքեր.....	4
3. Ընտանիքի դերը անձի դիրքորոշումների ձևավորման գործում.....	7
4. Մոր դերը երեխայի դիրքորոշումների ձևավորման մեջ.....	9
5. Հոր դերը երեխայի դիրքորոշումների ձևավորման մեջ.....	11
6. Խորհուրդներ ծնողներին.....	13
7. Ընտանեկան կոնֆլիկտների նկարագիրը, տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա.....	14
8. Եզրակացություն.....	21
9. Օգտագործված գրականության ցանկ.....	23

## Ն Ե Ր Ա Շ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ընտանիքը այն առաջնային սոցիալական հիմքն է, որը ձևավորում է անձնավորության բարոյական և հոգեկան կերտվածքը: Թեմայի կարևորությունը կայանում է նրանում, որ ընտանիքը կարևորագույն նշանակություն ունի երեխայի անձի ձևավորման և զարգացման գործում, և այն, թե ինչպիսին կլինի երեխայի հետագա կյանքն ու ճակատագիրը, դիրքորոշումը շրջապատողների ու սեփական անձի նկատմամբ, մեծապես կախված է ընտանիքում ստեղծված բարոյա-հոգեբանական մթնոլորտից, այն բանից, թե ինչպես են ծնողները վերաբերվում միմյանց և երեխային: Հենց ընտանիքում է երեխան ուղղակիորեն հաղորդակցվում կյանքի հետ, անում առաջին քայլերը դեպի մեծ կյանք, ընտանիքում են դրվում աշխարհի հասկացման հիմքերը, երեխան յուրացնում է բարոյական արժեքներ, դիրքորոշումներ, սոցիալական նորմեր, հասարակական-մշակութային ավանդույթներ, որոնք հիմք են հանդիսանում նրա հոգեկանի զարգացման համար: Ծնողներին պատկերավոր կերպով կարելի է համեմատել հրթիռի հիմքի հետ, որը տիեզերանավը նախապատրաստում է հետագա ինքնուրույն թռիչքին: Մանկության տարիները երեխայի հետագա կյանքում շատ բան են որոշում: Չէ՞ որ երեխայի աչքերը միշտ հառած են դեպի ծնողները: Ընտանիքի դերը երեխայի հոգեկան առողջության պահպանման գործում արդիական է հատկապես ներկայիս պայմաններում, երբ տեղեկատվության մեծ հոսքը դժվարեցնում է ինքնուրույն կողմնորոշվելը: Իրականի և երևակայականի սահմանագծին գտնվող դպրոցականը, հայտնվելով անելանելի իրավիճակում, չի կարողանում համարժեք վարքագիծ դրսևորել և հայտնվում է վախի, տագնապի ոլորաններում:

*Աշխատանքի նպատակն է՝* խորացնել ընտանեկան հարաբերությունների առանձնահատկությունների և դժվարությունների մասին գիտելիքները, բացահայտել ընտանեկան միջավայրի, ընտանեկան կոնֆլիկտների, ներընտանեկան փոխհարաբերությունների, ծնողական վերաբերմունքի ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա, պարզել, թե ինչ դեր ունեն ծնողները անձի ձևավորման և զարգացման գործում:

# ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔԵՐ

**<<Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությամբ է պայմանավորվում մարդկային հասարակության անվտանգությունը>><sup>1</sup>:  
Աղլեր**

Մարդկային քաղաքակրթությունն իր զարգացման ընթացքում ստեղծել է մի շարք անփոխարինելի արժեքներ, որոնց թվին է պատկանում նաև ընտանիքը:

*Ընտանիք համարվում է ամուսինների, ծնողների և երեխաների փոխհարաբերությունների համակարգը, փոքր խումբ, որի անդամները միմյանց հետ կապված են ամուսնական կամ արյունակցական հարաբերություններով, ընդհանուր կենցաղով և բարոյական փոխադարձ պատասխանատվությամբ:*

Սովորաբար, երբ խոսք է գնում այս կամ այն երեխայի, դեռահասի լավ կամ վատ արարքի մասին, առաջին հերթին մեզ հետաքրքրում է այն, թե ինչ ընտանիքից է, ինչ դաստիարակություն է ստացել, ովքեր են և ինչով են զբաղվում նրա ծնողները: Եթե նրա վարքագիծը հավանության կամ գովասանքի է արժանանում շրջապատողների կողմից, ապա պարզ է դառնում, որ տվյալ անձը դաստիարակվել է լիարժեք ընտանիքում, ընտանեկան առողջ բարոյահոգաբանական մթնոլորտում, այսինքն՝ բարենպաստ ընտանիքում:

Ժողովրդական ասույթն ասում է. **<<Ընտանիքը դաստիարակության ամենամեծ համայնարանն է>>**: Այն, թե ինչպիսին կլինի ապագա երեխայի կյանքն ու դաստիարակությունը, մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով են նրա ծնողները պատրաստ ընտանեկան կյանքին և երեխայի դաստիարակությանը: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ շատ երեխաներ իրենց ապագա ընտանիքը կազմում են՝ հիմք ընդունելով սեփական ընտանիքի մոդելը: Այդ է պատճառը, որ բոլոր ժամանակներում էլ մեծ նշանակություն է տրվել ընտանեկան դաստիարակության ճիշտ կազմակերպմանը: Սակայն, այնուամենայնիվ, անհերքելի է համարվում այն փաստը, որ երեխայի դաստիարակության գործում կարևորագույն դերը պատկանում է ընտանիքին: Հենց ընտանիքն է եղել, կա և հավանաբար կլինի անձնավորության ձևավորման կարևորագույն միջավայրը և դաստիարակության գլխավոր ինստիտուտը: Ընտանիքն այն կարևորագույն երևույթներից մեկն է, որն ուղեկցում է մարդուն նրա ողջ կյանքի ընթացքում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ծնողները իրենց երեխայի դաստիարակությունը պետք է սկսեն դեռևս ներարգանդային

<sup>1</sup> <https://ter-hambardzum.net/ընտանիքը-եւ-գլ-որպէս-սցու-մը/>

(պրենատալ) զարգացման փուլից: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ եթե պտուղը ծնողի կողմից ցանկալի և սպասված է, ապա ծնունդից հետո նրանց միջև ստեղծվում է ամուր հուզական կապ: Մեզ է հասել մի հետաքրքիր դեպք. ամուսնական մի զույգ անվանի մտածողներից մեկի մոտ է բերում իր նորածինն և հարցնում, թե երբ պետք է սկսեն երեխայի դաստիարակությունը: Նա պատասխանում է. <<Դուք արդեն ինը ամիս ուշացել եք>>:

Ինչպես արդեն վերը նշեցինք, ընտանիքում են դրվում երեխայի դաստիարակության հիմքերը: Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման տեսանկյունից հատկապես կարևորվում է բարոյական, գեղագիտական և աշխատանքային դաստիարակության դերը:

**Բարոյական դաստիարակությունը ընտանիքում:** Կան այնպիսի որակներ, նորմեր, որոնք երեխայի մեջ պետք է դաստիարակել ընտանիքում, քանի որ նույնիսկ մանկավարժները չեն կարող դրանք այնպես իրականացնել, ինչպես ծնողները, օրինակ՝ մարդասիրություն (հումանիզմ), նրբանկատություն, անկեղծություն, նվիրվածություն, հոգատարություն և այլն: Այս որակները երեխաների մեջ դաստիարակելու համար կարելի է օգտագործել ընտանեկան ավանդույթներ, սովորույթներ ու միջոցառումներ, որոնք շատ ավելի օգտակար կարող են լինել, քան հազարավոր քարոզներն ու խրատները:

**Գեղագիտական դաստիարակությունը ընտանիքում:** Երեխաների գեղագիտական դաստիարակության իրագործման գործում կարևոր դեր կարող են խաղալ գեղարվեստական գրականության ընթերցանությունը, կարդացած գեղարվեստական ստեղծագործությունները ընտանիքի անդամների և ուսուցիչների հետ քննարկելը, կերպարների բնավորության, անհատական հոգեբանական առանձնահատկությունների համամետական վերլուծությունները և այլն: Ծնողները պետք է հաշվի առնեն, որ երեխայի մեջ գեղեցիկը տեսնելու, գնահատելու և պահպանելու ունակությունը պետք է ձևավորել դեռևս վաղ մանկության տարիներին: Կարևոր է երեխաներին սովորեցնել ամեն ինչում տեսնել գեղեցիկը՝ հիմք ընդունելով անվանի մտածողներից մեկի հետևյալ խոսքերը. <<Վարդի փշերից գանգատվելու փոխարեն պետք է ուրախանալ, որ փշերի մեջ վարդ է աճում>>: Ժուլբեր

**Աշխատանքային դաստիարակությունը ընտանիքում:** Միշտ պետք է հիշել, որ աշխատանքի ընթացքում և նրա միջոցով է մարդը դաստիարակվում: Ծնողները պետք է երեխաներին բացատրեն, պարզաբանեն, թե աշխատանքը որքան կարևոր է մարդու կյանքի, հասարակության զարգացման, պետության կայացման և հզորացման համար, նրանց սովորեցնեն հարգել աշխատանքն ու աշխատավոր մարդուն՝ անկախ վերջինիս

մասնագիտությունից: Վաղ մանկությունից սկսած՝ երեխաներին պետք է մասնակից դարձնել տնային տարբեր տեսակի աշխատանքների իրականացմանը, օրինակ, հավաքել անկողինը, մաքրել իր անկյունը, խնամքով վերաբերել դասագրքերին, սեփական հագուստն ու կոշիկները մաքուր պահել:

**Ծնողների հնրևադաստիարակությունը:** Դաստիարակությունը անվերջ և շարունակական գործընթաց է: Յուրաքանչյուր ծնող պետք է մշտապես հիշի, որ իր երեխայի դաստիարակության արդյունավետությունը մեծապես կախված է իր իսկ դաստիարակվածության մակարդակից: Այդ առիթով ականավոր մանկավարժ **Ա. Ս. Մակարենկոն** նշել է, որ ծնողը երեխային դաստիարակում է ոչ միայն այն ժամանակ, երբ խոսում է նրա հետ կամ ինչ-որ բան է սովորեցնում, այլ նաև իր արարքներով և գործողություններով: Օրինակ, եթե ծնողը երեխային սովորեցնում է սուտ չխոսել, ապա նախ և առաջ նա ինքը պետք է ճշտախոս լինի: Ինչպես նաև կարևոր է, որպեսզի ծնողները իրենք էլ մշտապես զբաղվեն ինքնակրթությամբ, հաճախակի այցելեն պատմական վայրեր, թանգարաններ՝ դրական օրինակ ծառայելով երեխաների համար: Երեխան պետք է զգա, որ ինքը սիրված մարդ է տանը, դպրոցում և ընդհանրապես հասարակության մեջ: Այսպիսով, երեխայի դաստիարակությունը երբեք էլ դյուրին չի եղել: Երեխային կրթելն ու դաստիարակելը պահանջում է մեծ համբերություն, նվիրվածություն, ժամանակ, պարտքի ու պատասխանատվության զգացում, քանի որ **ամեն ինչ՝ թե՛ դրականը, թե՛ բացասականը մարդը ստանում է հենց ընտանիքում:**

## Ը Ն Տ Ա Ն Ի Թ Ի Դ Ե Ր Ը Ա Ն Ձ Ի Դ Ի Ր Ք Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Ե Ր Ի Ձ Ե Վ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Գ Ո Ր Ծ ՈՒ Մ

Ինչպես հայտնի է, անձը ձևավորվում է միջանձնային փոխհարաբերություններում՝ ժառանգական նախադրյալների հիման վրա: Մարդկային անհատի սոցիալականացման հիմնական արդյունքներից մեկը, անշուշտ, նրա սոցիալական դիրքորոշումների համակարգի ձևավորումն է:

Յուրաքանչյուր մարդ մեծաթիվ դիրքորոշումներ ունի այն մարդկանց, սոցիալական խմբերի և իրադարձությունների նկատմամբ, որոնց առնչվել կամ առնչվում է իր օնտոգենետիկական զարգացման ընթացքում: Դիրքորոշումները անձի հոգեբանական կառուցվածքի կարևորագույն բաղադրիչներն են: Դրանք ներհոգեկան ուժեր են, որոնք մեզ ստիպում են ուշադրություն դարձնել որոշակի երևույթների վրա և անտեսել մյուսները, ընտրական պատասխան տալ որևէ օբյեկտի ազդեցությանը կամ իրականացնել որոշակի գործունեություն: Այդ է պատճառը, որ դրանց իմացությունը շատ կարևոր է անձի սոցիալական ակտիվության, խմբային սոցիալականացման և ադապտացիայի գործընթացները վերլուծելու տեսանկյունից:

Գոյություն ունի դիրքորոշումների ձեռքբերման երկու հիմնական աղբյուր՝ մեզանից յուրաքանչյուրի անձնական փորձը և սոցիալական ազդեցությունները: Վերջիններիս թվին են պատկանում ընտանիքը, ընկերները, այլ ռեֆերենտային խմբերն ու անձինք, զանգ-վաճային լրատվական միջոցները և այլն:

Մարդկային քաղաքակրթությունն իր զարգացման ընթացքում ստեղծել է մի շարք անփոխարինելի արժեքներ, որոնց դասին է պատկանում նաև ընտանիքը:

Հենց ընտանիքն է եղել, կա և, հավանաբար, կլինի անձնավորության ձևավորման կարևորագույն միջավայրը և դաստիարակության գլխավոր ինստիտուտը: Ընտանիքը այն կարևորագույն երևույթներից մեկն է, որն ուղեկցում է մարդուն նրա ողջ կյանքի ընթացքում:

Ընտանիքները պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ բարենպաստ և անբարենպաստ: **Բարենպաստ** ընտանիքի ընդհանուր հոգեբանական բնութագիրն այն է, որ այն իր մեջ ներառում է բոլոր այն սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, բարոյական, իրավական, տնտեսական և այլ գործոնները, որոնց ամբողջական ներգործությունը նպաստում է դրական մթնոլորտի ստեղծմանը և անձի, մասնավորապես, երեխայի լիարժեք ձևավորմանը: Իսկ վերջինս ենթադրում է ճիշտ,

օրինակելի, հասարակական վարքի նորմերի, կայուն բարոյական համոզմունքների ու հայացքների, դրական հետաքրքրությունների, հակումների, պահանջմունքների համակարգի ձևավորում, կենսակարևոր համալիր դիրքորոշումների կազմավորում ուսման և աշխատանքի, մարդկանց, հասարակական և մշակութային արժեքների նկատմամբ: **Անբարենպաստ** ընտանիքի գլխավոր առանձնահատկությունը նրա բացասական, քայքայ-յիչ, ապասոցիալականացնող ազդեցությունն է երեխայի անձի ձևավորման և զարգացման վրա, որը դրսևորվում է տարբեր տեսակի վարքագծային շեղումներով:

Անձի սոցիալական ախտահարված դիմանկարը, խաթարված սոցիալական գիտակցությունը, նախ և առաջ հետևանք են նրան, որ սոցիալականացման գործընթացում դաստիարակչական ներգործությունները եղել են սակավ արդյունավետ, անարդյունավետ, կամ նույնիսկ հակամանկավարժական: Բազմաթիվ հետազոտություններով ապացուցված է, որ այդպիսի ներգործության հետևանքները առաջին հերթին իրենց արտահայտությունն են գտնում երեխա-ծնող, երեխա-մեծահասակ, ընդհանրապես մարդ-մարդ հարաբերություններում, ապա տրանսֆորմացվում են այլ հարաբերություններ: Ընդ որում, այդ սոցիալական բացասական ներգործությունը առաջին հերթին խաթարում է անձի **հուզական ոլորտը**: Խաթարվում են հուզական հարաբերությունները երեխա-ծնող հարաբերություններում **բացասական հուզական դիրքորոշման** տեսքով: Այդ դիրքորոշումը քրեածին վարքի դիրքորոշման վճռորոշ հոգեբանական նախապայմաններից մեկն է, որը ընկած է բոլոր տիպի սոցիալական հարաբերությունների խաթարումների հիմքում: *Բացասական հուզական դիրքորոշումը սոցիալական դրական ներգործությունն իրակա-նացնող սուբյեկտի նկատմամբ կարող է երեխայի մեջ հանգեցնել տարաբնույթ հոգե-բանական բացասական նորագոյացությունների ձևավորմանը, ինչպիսիք են կամակո-րությունը, նեգատիվիզմը, մեծահասակին չլսելը, նրա արդարացի պահանջմունքները չկատարելը, ստախոսությունը, կեղծավորությունը, բամբասկոտությունը և այլն:*



# ՄՈՐ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ

## ՄԵԶ

*<<Մոր սիրտը անդունդ է, որի խորքում միշտ ներում կգտնվի>>:*

### Բալզակ

Մոր վճռորոշ դերը նախքան երեխայի ծնվելը և դրանից հետո հայտնի է դեռևս հնագույն ժամանակներից: Կարևոր նշանակություն ունի այն, թե կինը ինչպիսի դիրքորոշում ունի հղիության, ամուսնու նկատմամբ, ինչպիսի կենսակերպ է վարում, ինչպիսի զգացողություններ է ունենում երեխայի մասին մտածելիս և այլն: Ըստ եռլայան, կարելի է ասել, որ երեխան մոր անկեղծ սիրուն և հոգատարությանը արձագանքում է պատասխան սիրով, ինչի արդյունքում էլ **երեխաները, որոնց սիրում են, ավելի լավ են զարգանում և ունենում են դրական դիրքորոշում այլ մարդկանց և սեփական անձի նկատմամբ:** Այդ տեսանկյունից հատկապես կարևորվում է Նորաճնության շրջանը, քանի որ այն համարվում է Նոր կենսակերպին հարմարվելու բարդ շրջան: Ըստ **Էրիքսոնի**<sup>2</sup> սա աշխարհի և մարդկանց նկատմամբ երեխայի մեջ բազային վստահության և անվստահության ձևավորման ճգնաժամն է: Երբ մայրը գրկում է երեխային, երբ համբուրում է նրան, երգում նրա համար, խաղում նրա հետ, ապա այդ ամենի արդյունքում նա երեխային է տալիս նրա ուղեղի զարգացման համար անհրաժեշտ ստիմուլներ, որոնք վերջին հաշվով երեխային դարձնում են հոգեբանորեն ամբողջական անձնավորություն: Նորաճնության տարիքում մոր հետ ունեցած հարաբերությունները ոչ մի տեղ չեն չքանում նաև վաղ, միջին և հասուն տարիքում. փոփոխվում են միայն դրանց արտաքին դրսևորումները: Այդ առիթով Վ.Գ.Բելինսկին գրել է. <<Մոր սիրուց ավելի սուրբ և անշահախնդիր ոչինչ չկա. ամեն տեսակի մտերմական կապ, ամեն մի սեր, ամեն կիրք նրա համեմատությամբ կամ թույլ է, կամ շահախնդիր>>: Համաձայն **Ադլերի** կոնցեպցիայի՝ *Մոր առողջ սերը երեխայի նկատմամբ հնարավորություն է տալիս նրա մեջ ձևավորել սոցիալական հետաքրքրություն և համապատասխան սոցիալական դիրքորոշումներ*<sup>2</sup>: Այսինքն՝ եթե կինը քնքշու-թյուն, հոգատարություն է դրսևորում նաև ամուսնու, այլ երեխաների և ընդհանրապես մարդկանց հանդեպ, ապա դա երեխայի մեջ ձևավորում է դերային մոդել, ինչի շնորհիվ երեխան հասկանում է, որ բացի ընտանիքի անդամներից, աշխարհում կան նաև այլ նշանակալի անձինք: Եվ վերջապես, ըստ Ադլերի, երեխայի մեջ սոցիալական զգացմունքներ ձևավորելու գործում վճռական նշանակություն ունեն ծնողների միջև ձևավորված հարաբերությունները: Եթե ամուսինները հաճախակի

<sup>2</sup> [https://hy.wikipedia.org/wiki/Վ\\_Ֆրեդ\\_Ալլ\\_եր](https://hy.wikipedia.org/wiki/Վ_Ֆրեդ_Ալլ_եր)

Են տարածայնություն-ներ ունենում, ապա երեխաները սկսում են միավորվել ծնողներից մեկի հետ ընդդեմ մյուսի: Արդյունքում այս <<խաղում>> միշտ <<պարտվում>> են հենց երեխաները:

## ՀՈՐ ՂԵՐԸ ԵՐԵՒԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

*<<Տղամարդը և կինը երկու նոտաներ են, առանց որոնց մարդկային սրտի լարերը չեն կարող ճիշտ և ամբողջական ակորդը նվագել>>:*

### Դ. Մադգինի

Երեխայի դիրքորոշումների ձևավորման գործում ոչ պակաս կարևոր է նաև հոր դերը: Նախ և առաջ հայրը պետք է դրական դիրքորոշում ունենա կնոջ, աշխատանքի, երեխաների և ընդհանրապես հասարակության նկատմամբ: Բացի այդ, նրա արդեն ձևավորված սոցիալական հետաքրքրությունը պետք է արտահայտվի երեխաների հետ հարաբերություններում: Ըստ Ադլերի՝ իդեալական համարվում է այն հայրը, ով իր երեխաներին վերաբերվում է հավասարի պես և կնոջ հետ միասին ակտիվ մասնակցություն է ունենում նրանց դաստիարակության գործընթացին:

Հոր դերը երեխայի դաստիարակության գործում շատ բարդ է և պրոբլեմատիկ: Այն հարցին, թե ում հետ են կիսում իրենց գաղտնիքները, դեռահասների մեծ մասը պատասխանում է ընկերների, մոր, տատիկի, քրոջ կամ եղբոր, և միայն վերջին տեղում գտնվում է հայրը: Որոշ ընտանիքներում հոր և երեխաների շփման միակ ձևը հեռուստահաղորդումների համատեղ դիտումն է, ինչը, բնականաբար, բավարար չէ երեխայի հոգեկանի նորմալ զարգացման և հոր հետ հոգեբանական կոնտակտ հաստատելու համար: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ տղամարդիկ պարզապես չեն կարողանում արտահայտել իրենց խորը զգացմունքներն ու ապրումները:

Հատկապես կարևորվում է հոր դերը տղա երեխայի դաստիարակության և դիրքորոշումների ձևավորման գործում, քանի որ որդու համար հայրը համարվում է տղամարդու Էտալոն: Հոր և որդու միջև ընդհանուր խաղերը, կապվածությունը, գաղտնիքները երեխայի համար տղամարդկային վարքագծի ավելի լավ մոդել են, քան Ֆիսկական տղամարդ:՝ դաստիարակելու մոր ուղղակի ջանքերը: Մանկության տարիներին ոչ բավարար կամ բացասական դերային իդենտիֆիկացիան նույն սեռի ծնողի հետ երեխայի համար լրացուցիչ դժվարություններ է առաջացնում նաև հասակակիցների հետ շփման ժամանակ, ինչպես նաև արտացոլվում է ավելի հասուն տարիքում միջանձնային հարաբերություններ հաստատելու մեջ: Այսինքն՝ ստացվում է, որ այդպիսի տղամարդիկ մանկության տարի-ներին չեն ունեցել իրենց հոր հետ շփվելու ադեկվատ փորձ, այլ կերպ ասած՝ չեն եղել իրենց **հոր որդին**, իսկ ավելի հասուն տարիքում չեն կարողանում դառնալ իրենց **որդու հայրը**: Հոր դերը շատ մեծ է նաև աղջիկ երեխաների սոցիալիզացիայի և դիրքորոշումների ձևավորման գործում, և հաստատված է, որ լավ հայրերը ի վիճակի են օգնել իրենց դուստրերին հակառակ սեռի ներկայացուցիչների հետ ճիշտ

հարաբերություններ հաստատվելու գործում: Դա բացատրվում է նրանով, որ եթե հոր և դստեր միջև առկա է առողջ հոգեբանական կոնտակտ, ապա դա նպաստում է վերջինիս մեջ հակառակ սեռի ներկայա-ցուցիչների նկատմամբ համապատասխան դիրքորոշման ձևավորմանը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ մայրը օգնում է երեխային ապրել տանը, իսկ հայրը օգնում է նրան դուրս գալ արտաքին աշխարհ: Այլ կերպ ասած՝ մայրը պատասխանատու է հուզական կապվածության, իսկ հայրը՝ հուզական անկախության համար: Այդ է պատճառը, որ եթե ընտանիքում տեղի են ունենում մշտական կոնֆլիկտներ, կամ ծնողներից մեկը բացակայում է (ֆիզիկապես կամ հուզականորեն), ապա երեխան ստանում է ոչ լիարժեք դաստիարակություն, ինչի արդյունքում էլ ձևավորվում են ոչ ադեկվատ դիրքորոշումներ:

**ԻՆՉՊԵՍ ԶՆԱՐԱՎՈՐԻՆՍ ՃԻՇՏ ՁԵՎԱՎՈՐԵԼ**  
**ԵՐԵՒԱՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**  
**ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ**

- 👉 Մի՛ սպասեք, որ Ձեր երեխան դառնա այնպիսին, ինչպիսին Դուք եք երագում: Օգնե՛ք նրան դառնալու ոչ թե Ձերը, այլ ինքն իրենը:
- 👉 Բավականաչափ ժամանակ տրամադրե՛ք երեխային՝ հետաձգելով հանդիպումները կամ հեռուստացույց դիտելը:
- 👉 Խոսե՛ք նրա հետ Ձեր մասնագիտության, աշխատանքի և խնդիրների մասին. դա նրան կնախապատրաստի իրական կյանքում ապրելուն:
- 👉 Զաճախակի՛ պատմեք երեխային Ձեր մանկության մասին. դա կօգնի նրան հասկանալ, որ իր ծնողներն էլ երբևէ եղել են այնպիսին, ինչպիսին հիմա ինքն է:
- 👉 Երբեք և ոչ մի պարագայում մի՛ նվաստացրեք երեխային և նրա զգացմունքները:
- 👉 Երեխայի խնդիրներին բարձրից մի՛ նայեք: Հիշե՛ք, որ կյանքը նրա համար պակաս դժվար չէ, որքան Ձեզ համար, իսկ գուցե և նրա համար ավելի բարդ է. Չէ՞ որ նա դեռևս փորձ չունի:
- 👉 Սիրե՛ք Ձեր երեխային ցանկացած ձևով՝ հասուն, անտաղանդ, անհաջողակ կամ խելացի: Շփվելով նրա հետ՝ ուրախ եղեք, քանի որ երեխան տոն է, որը դեռևս Ձեզ հետ է:
- 👉 Հիշե՛ք, որ ընտանիքը, ըստ էության, փոքրիկ պետություն է՝ իր սեփական պատմությամբ ու մշակույթով: Եվ որքան ավելի շատ լինեն ձեր համատեղ ստեղծած ավանդույթները, արվեստի նմուշներն ու տոնակատարությունները, այնքան ավելի կայուն կլինի ընտանիքը, և այնքան ավելի հետաքրքիր կդառնա ձեր <<հանրապետության>> յուրաքանչյուր <<քաղաքացու>> կյանքը:

## **ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՅԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿՐԱ**

Մարդը ապրում և գործում է հասարակության մեջ և իր նպատակներին հասնելու համար հաճախ բախվում է որոշակի հակասությունների, խնդիրների, ի հայտ են գալիս կոնֆլիկտային իրավիճակներ: Կոնֆլիկտները կարող են լինել ներանձնային, միջանձնային և միջխմբային, ըստ որոշ հեղինակների, կոնֆլիկտ կարող է առաջանալ նաև անձի և խմբի միջև: Սակայն բոլոր դեպքերում կոնֆլիկտի հիմքում ընկած են անհամատեղելի ցանկություններ, նպատակներ, պահանջումներ, որոնց միաժամանակյա բավարարումը հնարավոր չէ: Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ: Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա: Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում: Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն Էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային` ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Գոյություն ունի «կոնֆլիկտ» հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես «մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում` կապված բացասական սուր հուզական

ապրումների հետ»<sup>3</sup>: Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ «կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»<sup>4</sup>: Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի՝ Ա. Մ. Ստոյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. «Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով»<sup>5</sup> : Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է: Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է:

Ստորև ներկայացված են ընտանեկան կոնֆլիկտների տեսակներն ու դրանց հիմնական պատճառները:

**1. Կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև:** Կին-տղամարդ հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, զույգերից մեկի «ծանր» բնավորությունը, սեռական անբավարարվածությունը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները և այլն: Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով: Առաջին ճգնաժամն ի հայտ է գալիս ամուսնության 1-ին տարում, հատկապես երբ ընտանիքում երեխա է ծնվում, երկրորդը՝ ամուսնության 3-7-րդ տարում,

<sup>3</sup> Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ. 1990. – 144с. Էջ 45

<sup>4</sup> Сергейчук А.В. Социология управления. – СПб.: Бизнес-пресс, 2002. 240с. Էջ 212

<sup>5</sup> Столярченко А. М. Общая и профессиональная психология. – М.: ЮНИТИ-ДАНА, 2003. 382с. Էջ 294

երրորդը՝ 17-25-րդ տարում: Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց: Ներդաշնակ զույգ կարող են լինել օրինակ սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը: Ֆիզիկական համատեղելիությունը պայմանավորված է կնոջ և տղամարդու օրգանիզմի կառուցվածքով, սեռական օրգանների առանձնահատկություններով, որոնք էական նշանակություն ունեն սեռական կյանքում: Արդեն ապացուցված է, որ սեռական անբավարարվածությունը, ինտիմ կյանքում առկա խնդիրներն առաջացնում են սառնություն ու անտարբերություն կին-տղամարդ հարաբերություններում: Ընտանիք կազմելիս հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ տղամարդկանց օրգանիզմի վերջնական ձևավորումը տեղի է ունենում 25 տարեկանում, իսկ կանանց օրգանիզմի վերջնական ձևավորումը՝ 18-20 տարեկանում: Բացի այդ, տղամարդկանց սեռական հակումն ավելի երկար է պահպանվում, քան կանանց: Ուստի, կենսաբանական տեսանկյունից ցանկալի է, որ զույգ կազմելիս տղամարդը լինի տարիքով ավելի մեծ, որպեսզի սեռական կյանքում լինի ներդաշնակություն<sup>6</sup>:

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ կնոջ, ապա՝ երեխաների հետ: Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են.

- **Նևրոտիկ ընտանիքներ**, որտեղ զույգի մոտ նկատվում են տազնապայսության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն,
- **ճգնաժամային ընտանիքներ**, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման,

---

<sup>6</sup> Ильин Е. П. Дифференциальная психофизиология мужчины и женщины. СПб.: Питер, 2003. - 544с. էջ 224



- **արորբլեմային ընտանիքներ**, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում <sup>7</sup> : Մշտական վեճերը, կոնֆլիկտները միանշանակ ազդում են ինչպես ամուսնական զույգի, այնպես էլ երեխայի հոգեկան առողջության վրա<sup>8</sup>:

Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեամառիկ և այլ հիվանդություններ: Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ:

**2. Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում:** Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ծգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև: Երեխաներն այս շրջանում դառնում են կամակոր, համառ, ամեն ինչ անում են պահանջվածին հակառակ, բացասական վերաբերմունք են ցուցաբերում մեծահասակների նկատմամբ, թեպետ պետք է նշել, որ երեխայի նեգատիվիզմը ոչ բոլորի նկատմամբ է դրսևորվում. այն խիստ ընտրողական բնույթ է կրում և ուղղված է

<sup>7</sup> Միրզոյան Վ.Խ., Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա, ՇՊՀ տեղեկագիր, Գյումրի, 2014, էջ 225-226:

<sup>8</sup> Лобан Н.А. Конфликтология: УМК – Минск.: Изд-во МИУ, 2008. 471с.

մասնավորապես նրանց դեմ, ովքեր փորձում են ճնշել իր ազատությունը: Մեծահասակները պետք է իմանան, որ երեք տարեկանի ճգնաժամն անցողիկ երևույթ է և վկայում է այն մասին, որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային փուլ: Ծնողների տեղեկացվածությունը, նրանց հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող-երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջրպետ առաջանա: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում «հայրեր և որդիներ» խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել «իդեալական ծնողի» իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա «իդեալական» և «իրական» ծնողների միջև: Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքերում ծնող-երեխա լարված հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների: Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում անվստահ, բարդույթավորված: Փոքր տարիքում երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է նրանում, որ երեխան սկսում է հանել տիկնիկի աչքերը, դիտավորյալ կոտրել խաղալիքները, պոկել ծաղիկները, քարով հարվածել բակի կատուներին և շներին: Գերադասում է խաղալ «ագրեսիվ» խաղալիքներով՝ զենք, ատրճանակ, նետ ու աղեղ և այլն: Այնուհետև երեխայի ագրեսիվ հակումները դրսևորվում են շրջապատող մարդկանց նկատմամբ: Երեխան ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, փորձում ճնշել նրանց, նվաստացնել, ցավ պատճառել: Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ,

կաշկանդված, չչփվող: Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը:

**3. Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում:** Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ատելության ինչպես ծնողի, այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնվելուց հետո ծնողներն առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը: Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հայկական ընտանիքներում «նորմալ» է տղա-աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրերը սովորաբար սիրում են տղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիքից հասկանում և զգում է ծնողի վերաբերմունքն ու սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ:

**4. Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ:** Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում: Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատներ: Որքան բազմանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը: Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա,

սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամիտի, ընկճված ու անտարբեր:

## Ե Չ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Այսպիսով, ամփոփելով մեր աշխատանքը՝ կարող ենք եզրակացնել, որ ընտանիքը կարևորագույն նշանակություն ունի երեխայի աճի ու զարգացման, նրա հոգեկան կերտվածքի ու դիրքորոշումների ձևավորման համար: Ընտանիքը մարդու համար ապահովում է լիարժեք հոգեբանա-ֆիզիոլոգիական կոմֆորտ. կատարում է <<հուզական ապաստարանի>> ֆունկցիա: Ընտանիքը թույլ է տալիս իր անդամներին զգալ իրենց եզակի, անկրկնելի և անհրաժեշտ:

Երեխաները կարիք ունեն պաշտպանվածություն զգալու ընտանիքում: Իրենց պաշտպանվածությունը նրանք կապում են մեծերի հետ հարաբերություններում կայունությունից: Կոնֆլիկտները, վեճերը և անբավարարվածության հաճախակի արտահայտումները զրկում են երեխային անվտանգության զգացումից: Մեծերի վարքը երեխայի համար պետք է կանխատեսելի լինի. միայն այդ ժամանակ է նա սկսում հավատալ նրանց վստահելիությանը և իր պաշտպանվածությանը: Արտաքին անկայունության զգացումը, մոտ մարդկանց մոտ անպաշտպանվածության զգացումը գործոններ են, որոնք անբարենպաստ ազդեցություն են թողնում մանկական փխրուն հոգեկանի ձևավորման վրա:

Ծնողների վեճերի մթնոլորտում մեծացած երեխաները ստանում են կյանքի անբարենաչող սկիզբ: Ընդ որում, մանկության բացասական հիշողությունները ոչ մի տեղ չեն կորչում. դրանք շատ վնասակար են և պայմանավորում են համապատասխան մտածելակերպ, դիրքորոշում և վարքագիծ:

Ծնողները պետք է հասկանան, որ նույնիսկ անհաջող ամուսնության դեպքում չի կարելի երեխային ներքաշել ընտանեկան կոնֆլիկտների մեջ. երեխան մեղավոր չէ ծնողների սխալ ընտրության մեջ և չպետք է դառնա <<քավության նոխագ>>:

Ամուսնական հարաբերություններում, ամուսինների միջև առկա խնդիրները մեծապես վնասում են երեխային, և այդ ամենից առաջին հերթին տուժում է հենց նա: Այսինքն՝ կարող ենք վստահորեն ասել, որ կոնֆլիկտային ընտանիքները չեն կատարում ընտանիքի կարևորագույն ֆունկցիաներից մեկը՝ երեխայի սոցիալիզացիայի ֆունկցիան, ինչը, բնականաբար, հետագայում իր բացասական ազդեցությունը կունենա երեխայի կյանքի, գործունեության, մտածելակերպի ու դիրքորոշումների վրա:

*Պետք է հիշել, որ երեխայի կյանքի սկիզբը նրա հետագա ողջ ճակատագրի կարևորագույն փուլն է կազմում:* Այլ կերպ ասած՝ այն, թե ինչպիսին կլինի երեխան՝ ուրախ, աշխույժ, տխուր, թե ինքնամփոփ, խոշոր հաշվով կախված է ընտանիքում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտից, քանի որ հենց ընտանիքում է նա ստանում

ուրախության կամ տխրության առաջին <<կաթիլները>>, որոնք էլ նրա մեջ ձևավորում են որոշակի դիրքորոշումներ կյանքի, մարդկանց և սեփական անձի նկատմամբ:

## Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն Ց Ա Ն Կ

1. Միրզոյան Վ.Խ., Ընտանեական կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա, ՇՊՀ տեղեկագիր, Գյումրի, 2014, էջ 225-226:
2. Նալչաջյան Ա. <<Սոցիալական հոգեբանություն>>, Երևան 2004
3. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: «Ուրարտու» համալս., 2010, 456 էջ:
4. Андреева Т.В. “Семейная психология”
5. Ильин Е.П. Дифференциальная психофизиология мужчины и женщины. СПб.: Питер, 2003. - 544с.
6. Л.Б.Шнейдер “Психология семейных отношений” 2000
7. Лобан Н.А. Конфликтология : УМК – Минск.: Изд-во МИУ, 2008. 471с.
8. Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ. 1990. - 144с.
9. Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002. 240с.
10. Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003. 382с.
11. [https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hogebanutyun2000/2010\(1-2\).pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hogebanutyun2000/2010(1-2).pdf)
12. [https://hy.wikipedia.org/wiki/ Ալֆրեդ\\_Ադլեր](https://hy.wikipedia.org/wiki/Ալֆրեդ_Ադլեր)